

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՀՈՐԴԱՆԱՆԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սույն թվականի սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ այցելեցին Մայր Հայրենիքի տարբեր բուհերում սովորող մի խումբ հորդանանահայ ուսանողներ: Նրանք եղան Մայր տաճարում, ծանոթացան Վեհարանի ու Մայր Աթոռի «Գանձատան» հարստություններին:

Ապա ուսանողներին ընդունեց Վեհափառ Հայրապետը:

Ընդունելության ժամանակ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի Անի Պալիոզյանը ուսանողության անունից հանդես եկավ հետևյալ սրտառուչ խոսքով.

«Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ.

Այս րոպեիս մեծ հուզմունք ենք ապրում, որ վայելում ենք Ձեր բարձր ներկայությունը: Մենք՝ Ձեր հովվապետության հորդանանահայ հատվածի զավակներս, երջանիկ ենք, որ պատիվը ունեցանք Ձեր ծննդյան 80-ամյակը շնորհավորելու:

Ձեր կյանքի բազում տարիները, որ նվիրել եք մեր ազգի և Եկեղեցու ծառայության սուրբ գործին, դարձրել են Ձեզ մեր իդեալը, իբրև հոգևոր հայր և Հովվապետ, մեզ միշտ սովորեցնելով հայ մնալ:

Վեհափառ Տեր, մեր երիտասարդական սրտով մաղթում ենք Ձեզ երկար տարիների կյանք և քաջառողջություն՝ ի փառս աշխարհասփյուռ հայության գոյատևման ու բարգավաճման:

Աղոթում ենք, որ Ձեր Աջը հարատև հովանի լինի մեզ համար և շարունակի տնօրինել մեր բախտը:

Վեհափառ Տեր, այս դժվար օրերին, երբ մեր ազգը գտնվում է մեծ փորձության մեջ, մենք՝ Ձեր զավակները, մեր հայացքը միշտ հառած ենք Ձեզ և միշտ պատրաստ ենք լսելու Ձեր իմաստուն խրատները: Այժմ, ավելի քան երբեք, գիտակցում ենք այն ծանր բեռը, որ դրված է յուրաքանչյուրիս ուսերին:

Երդվում ենք հայապահպանության և հայոց լուսավորության բնագավառում Ձեր գործադրած ջանքերին մեր նպաստը բերել և այդպիսով արժանանալ Ձեր օրհնանքին:

Թող Աստված զորավիգ լինի Ձերդ Սրբությանը Ձեր իղձերի ու ձեռնարկած աստվածահաճո գործերի իրականացման ճանապարհին:

Վեհափառ Տեր, թույլ տվեք որդիական սիրով ու ակնածանքով համբուրել Ձեր Ս. Աջը և ստանալ Ձեր օրհնությունները»:

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետը տվեց իր օրհնությունները և հաջողություններ մաղթեց հորդանանահայ ուսանողներին ուսման մեջ ու հետագա կյանքում, միաժամանակ հույս հայտնելով, որ նրանք կլինեն արժանի զավակները մեր Եկեղեցու ու աշխարհասփյուռ հայ ժողովրդի:

ԹՂԹԱԿԻՑ